

ԱՆՈՒՇ ԹԱՍԱԼՅԱՆ

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
Էլիասցեն՝ anush.tasalyan@gmanil.com

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ՊՈՆԶԻԱՅԻ ԺԱՆՐԱՅԻՆ
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում

1920-ական թվականների Ե. Չարենցի բազմաժանր ստեղծագործությունների մի ծանրակշիռ հատվածն իրենց վրա կրում են ֆուտուրիզմի ազդեցությունը: Սակայն պետք է նկատել, որ Ֆ. Պ. Մարինետիի և ռուս ֆուտուրիստների ոչ բոլոր հիմնադրույթներն են ընդունելի: Եթե վերահիշյալ հեղինակների մանիֆեստները, հանգանակները, ծրագրերի մեծ մասը նաև քաղաքական բովանդակություն ուներ, ապա, «Դեկլարացիա երեքին» և նրա հիմնադրույթները գրական ծրագրեր էին առաջադրում և ունեին պոեզիայի զարգացումը նոր հունով տանելու, նրա բովանդակությունը ժամանակի սրընթաց ոլորտին համապատասխանեցնելու միտումներ:

Ե. Չարենցն այդ նպատակով փորձարկում է բանաստեղծական կառուցվածքի նոր ձևեր, պոեզիայի լեզուն մոտեցնում է ժողովրդախոսակցականին, փոփոխում գունային համակարգը, առավելություն տալիս հեռագրային ոճին, բանաստեղծության «հատակագիծը» մաքրում ավելորդ դետալներից՝ ածականներից, մակդիրներից ու ստեղծում բանարվեստի իր ինքնատիպ մոդելը:

Բանալի բառեր և արտահայտություններ: Ժանր, լեզու, ոճ, կառուցվածք, բանաստեղծություն, պոեմ, գունային համակարգ:

Ներածություն

1920-ական թվականներին Ե. Չարենցի ստեղծագործական կյանքում սկսվեց նոր շրջափուլ, որը հատկանշվեց ժանրային փոփոխությամբ, կառուցվածքի նոր ձևերի, նոր ոճի որակումներով: Այդ տասնամյակում Ե. Չարենցը գրեց տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ հանգավոր ու անհանգ բանաստեղծություններ, պոեմներ, ռուբայաթներ, ագիտկաներ, ռադիոպոեմներ, ռապսոդիաներ, ինչպես նաև «Տաղարան» շարքը, ինչը վկայում է, որ չէր բավարարվում միայն «Դեկլարացիա երեքի»

հիմնադրությունների գործնական կիրառություններով: Այդ ամենին էթե ավելացնենք գրականության տարբեր հարցերին նվիրված և իր ընդդիմադիրներին հակադարձող հոդվածները, պարզ կդառնա, թե ինչպիսի համառությամբ ու ջանասիրությամբ էր բանաստեղծը հաղթահարում իր ճանապարհի խոչընդոտները և գնում դեպի «Գիրք ճանապարհի» կոթողային ժողովածուն:

Նպատակն ու խնդիրները

Սույն հոդվածում մենք հիմնականում կանդրադառնանք Ե. Չարենցի ֆուտուրիստական շրջանի ստեղծագործությունների ժանրային բազմազանությանը, կառուցվածքային ու լեզվառճական յուրահատկություններին և կփորձենք բացահայտել ֆուտուրիզմը նրա համար ժամանակավոր հրապուրանք էր, ինչպես պնդում էին գրականագետներից շատերը խորհրդային տարիներին, թե՞ իր յուրահատուկ կողմերով հետագծային շարունակություն ունեցավ բանաստեղծի ստեղծագործական կյանքում:

Մեթոդաբանությունը

Օգտագործել ենք գեղարվեստական երկի արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննադատական, քերականական, կենսագրական: Օգտվել ենք հայ և օտարերկրյա մի շարք անվանի գրականագետների «Աղաբաբյան Ս., Գասպարյան Դ., Չաքարյան Ալ. Թամրազյան Հր., Սարինյան Ս., Քալանթարյան Ժ., Էդոյան Հ., Ա. Եղիազարյան, Քնյուշ Հ., Բարթ Ռ. և այլք» տեսական ուսումնասիրություններից:

1920-ական թվականներին՝ Ե. Չարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու հեղինակած «Դեկլարացիա երեքի» հրապարակումից հետո, գրական զարգացումները մտան առաջընթացի նոր հուն, սկիզբ դրվեց նոր շրջափուլի, պոեզիայի բովանդակությունը ժամանակի ռիթմերին համապատասխան հարստացնելու խնդիրը դարձավ օրվա հրամայական:

Այս առումով անտարակույս է, որ պոեզիայի նոր բովանդակությունը պահանջում է կառուցվածքի նոր ձևեր՝ բանարվեստի նոր «հատակագիծ», նոր լեզվամտածողություն ու բառապաշար, նոր ոճեր:

Գրական զարգացումները նոր հունով տանելու որոնումներում անուրանալի է Ե. Չարենցի դերը, ում բանաստեղծություններն ու պոեմները նորություն էին ինչպես բովանդակային, այնպես էլ կառուցվածքային, կերպարակերտման ու պատկերաստեղծման, նորաստեղծ բառերի պոեզիա ներմուծման, գունային համակարգը նոր նրբագծերով ու նրբերանգներով հարստացնելու առումներով:

Ե. Չարենցը փորձարկում է բանաստեղծության կառուցվածքի նոր մոդելներ, որտեղ պատկերավորման միջոցները դառնում են ավելի առարկայական, բառերը «պատռում են իրենց կեղևը», նրանց բառարանային իմաստները հարստանում են նոր բովանդակությամբ, գործնական կիրառությունները՝ շարահյուսական նոր դաստիարակներով:

Նա մեծ տեղ էր հատկացնում բանաստեղծության լեզվին, տաղաչափությանը, որն իր դասախոսություններից մեկում անվանում է «պոեզիայի մաթեմատիկա» և ընդգծում, որ առանց այդ իմացությանն հնարին է բանաստեղծ դառնալ: Իսկ «Ռուսական արդի պոեզիան» դասախոսության ժամանակ նա ասում է. «Նախկին մեղկ և հասարակական կյանքի ամենամեթ տրամադրությունների դիմաց՝ ֆուտուրիզմը հայտնաբերում է իր նոր լեզուն, նոր ռիթմերը, հանգերն ու թափը»¹: Դժվար չէ նկատել, որ Ե Չարենցը խիստ բծախնդիր էր պոեզիայի նոր բովանդակությանը համահունչ ռիթմական միավորներ ստեղծելու հարցում: Իսկ բանաստեղծության ռիթմը ստեղծում են չափը, հանգը, հնչյունաբանությունը, տունը, ոտքը, անդամը, տոնը, կիսատոնը, դադարը, հատածը, որոնք բանաստեղծական կառուցվածքի ամրաններն են: Այս կապակցությամբ Վ. Գ. Բելինսկին գրում է. «Իզուր են շատերը կարծում, թե վատ լեզուն և սղեղ ոտանավորը ոչինչ չարժեն և կարող են փրկվել զգացմունքի լրիվությամբ, երևակայության հարստությամբ և խոր գաղափարներով: Պոեզիայի էությունը գեղեցկությունն է, սզեղությունը նրա մեջ ոչ թե որևէ մասնավոր և ներելի թերություն է, այլ մահացու մի տարր, որը պոետի ստեղծագործության մեջ սպանում է նույնիսկ իսկապես գեղեցիկ տողերը, միակ վատ տողը, մի պրոզայիկ արտահայտությունը, մեկ անճիշտ բառը երբեմն ոչնչացնում է մի ամբողջ և այն էլ գեղեցիկ բանաստեղծության արժեքը»²:

Բանաստեղծներն իրարից տարբերվում են ոչ թե թեմաների ընտրությամբ, այլ լեզվի նկատմամբ ունեցած պատկերացումներով: Այդ առումով տեղին է հիշել Ռ. Բարթին, ով «Գրականություն և ճշմարտություն» գրքում գրում է. «Գրողը նա է, ում համար լեզուն խնդիր է առաջադրում, ով զգում է լեզվի խորությունը և ոչ թե գործիքայնությունը կամ գեղեցկությունը»³:

¹ **Չարենց Ե.**, Գրականության մասին, Երևան, Սովետական գրատղ հրատ., 1957, էջ 192:

² **Белинский В. Г.**, Собр. Соч. в 3-х томах, т-3, Москва, „Госиздат“, 1948, стр. 294.

³ **Բարթ Ռ.**, Գրականություն և ճշմարտություն, Էսսեներ, Երևան, 1999, էջ 8:

Լեզվի խորությունն ընդհանրապես լավագույնս է դրսևորվում տաղաչափության «որը «պոեզիայի մաթեմատիկայի» ամենաբարդ բնագավառներից մեկն է» խոր իմացությամբ: Ե. Չարենցի ստեղծագործություններում դժվար է հանդիպել այսպես կոչված տաղաչափական «կազուսների»՝ «կաղ», աղքատիկ հանգերի, որոնց տողերն իրար կցվում են բայի անդամ կամ խոնարհված ձևերով կամ բառավերջի մի երկու հնչյունի միացումով: Ե. Չարենցը հանգավորման մեծ վարպետ է, նրա հանգերը հարուստ են, հնչեղ, զույնի և հնչյունի համամիությամբ հյուսված, օրինակ՝ «Տեսե՛լ եք// Դուք// Երբևե՛// Աչքերով ձեր կույր, **անոթի**–// Ոսկեգոծ գունանն արևի// Կախված ամառվա **զենիթից**»⁴

Կամ՝

Օ՛, գուննա՛, գուննա՛, գուննա՛ ...

Տխրություն:

Թախիձ դեղին:

Օրերը ցնորք կդառնան,

Աշխարհը – անդուռ փակուղի⁵:

Ռիթմական միավորները Ե. Չարենցի բանաստեղծություններում ու պոեմներում ձևավորվում են տաղաչափական տարբեր համակարգերով: Հայերենին ընդհանրապես յուրահատուկ է վանկային «ոչ հաճախ՝ վանկաշեշտային» համակարգը: Սակայն Ե. Չարենցի պոեզիայում վանկային կառուցվածքների կողքին հանդիպում ենք նաև վանկաշեշտային, համաշերտ, ազատ ոտանավորների: Հայերենում վեց վանկանի ոտանավորներ համարյա չկան «բացառություն են Վ. Տերյանի մի քանի բանաստեղծությունները»: Ե. Չարենցի մոտ բացի վեցվանկանի տողերից, առկա են նաև տասնվեց վանկից կազմված տողերը «Տաղարան»:

1920-ական թվականներին Ե. Չարենցին յուրահատուկ են նաև հանգավորման տարբեր եղանակները՝ ներքին հանգավորում.

Ուխտավոր, մի անգամ կյանքիդ

Օրերում **տխուր** ու մռայլ

Թող ցոլա **հրահուր** ու անգին

Այդպիսի մի բախտ քո վրա⁶:

Հասածը և բառամիջի դադար տողի կեսում «Աղետ եղավ// Պատերազմ//⁷ «առձայնություններն «աստնանս», նմանաձայնությունները,

⁴ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1968, էջ 8:

⁵ Նույն տեղում, էջ 19:

⁶ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ

44:

բաղաձայնությունները «ալիտերացիա» Ե. Չարենցի ստեղծագործություններում ընդհանրապես «որոշ վերապահումներով նաև ֆուտուրիստական շրջանի բանաստեղծություններում ու պոեմներում» բառերը հանդես են գալիս որպես «իրերի որոշակի դասավորություն, երևույթների նկատմամբ դիտակետ, աշխարհայացք, պոեզիայի տարբեր, որոնք կազմավորվում են բանաստեղծության տաղաչափությունն ու մորֆոլոգիան»⁸:

Ե. Չարենցի 1920-ական թվականների ստեղծագործություններն ուշագրավ են նաև քերականական-շարահյուսական տարբեր ձևերի համադրություններով: Ստեղծագործության բովանդակությունն ու հնչեղությունն ավելի ընդձելու համար բանաստեղծն օգտագործում է շարահյուսական տարբեր ձևեր: Մեծ տեղ են զբաղեցնում բառ-նախադասությունները ««Ուտել»:// «Պաչել»:// «Փաշա»:// «Ես – նախագահ»:// «Կնյազ Բերյոթով», «Կապկազ» «թամաշա»: Բառ-նախադասություններն ընդգծում են շարժման անընդհատությունը, ռիթմը ««Սողում է»:// «Սողում էր»:// «Վերև// Ներքև»:// «Փրկեցեք,// փրկեցեք», «թրախկ, թոփ, թնդանոթ», «Չյուն»:// «Բուք»:// «Քամի»:// «Ուրագան», «Մտուղեն ամուսիններ կամ ինքնին կոմունիզմ»:

Խոսքին յուրահատուկ երանգ հաղորդելու, այն կտրուկ ու հատու դարձնելու նպատակով Ե. Չարենցն օգտագործում է նոր դիմավոր կամ անենթակա, բայական անդեմ միակազմ, անվանական անդեմ միակազմ նախադասություններ, որոնք յուրահատուկ են հեռագրական ոճին.

Ես տեսնում եմ – Ստամբուլի հեռուն,

Ու կռիվ

Ու պայքար

Ու ռումբ...

Բանաստեղծը տողերը չի ծանրաբեռնում ավելորդ դետալներով, գործողությունները նկարագրում է մեկ-երկու բառով, գործողությունների տարածաժամանակային սահմանները ընդգծված.

Երևա՛ն,

Քեզ

Իմ խոպոտ ճի՛չը էսօր.-

Ես

Թողնում եմ մի տարով

Փողոցներդ նեղ ու քոստտ:

⁷ Նույն տեղում, էջ

⁸ **Սարինյան Ս.**, Անհնարին է բառի մեջ շտեսնել հավերժությունը, Գրական թերթ, 2016, թիվ 26:

Գնում եմ

Նորից

Հյուսիս.

Գնում եմ - Մոսկով⁹:

Շարժումն ընդգծելու համար Ե. Չարենցը հաճախ օգտագործում է շաղկապներով սկսվող տողեր:

Եզրակացություն

1. XX դարասկզբին համաշխարհային և ռուս գրականության, արվեստի ու մշակույթի բնագավառներում սկսվեց նոր շրջափուլ, որի կողքով չէր կարող անտարբերությամբ անցնել նաև հայ գրականությունը: Հետհոկտեմբերյան բանարվեստի առաջընթացը նոր հունով տանելու, բանաստեղծության «հատակագիծը» փոխելու, բովանդակությունը հարստացնելու, կերպակերտման ու պատկերաստեղծման նոր մեթոդներ ու եղանակներ փնտրելու տեսական հիմնադրություններն առաջադրվեցին «Ռեկլարացիա երեքի» մեջ, որն այդ ուղղությամբ առաջին փորձը լինելով, բնականաբար գերծ չէր նաև վիճահարույց ձևակերպումներից:

2. Գրական-գեղարվեստական զարգացումները, նոր հունով տանելու որոնումներում անուրանալի է Ե. Չարենցի դերը, ում բանաստեղծություններն ու պոեմները նորություն էին ինչպես բովանդակային, այնպես էլ կերպակերտման ու պատկերավորման, նորաստեղծ բառերի՝ պոեզիա ներմուծման, ժանրային համակարգը նոր նրբագծերով ու նրբերանգներով հարստացնելու և մի շարք այլ առումներով: Ե. Չարենցը փորձարկում էր բանաստեղծության կառուցվածքի նոր մոդելները, որտեղ պատկերավորման միջոցները դառնում էին ավելի առարկայական, բառերի բառարանային իմաստները հարստանում են նոր բովանդակությամբ, գործնական կիրառությունները՝ շարահյուսական նոր դասդասումներով:

3. 1920-ական թվականների Ե. Չարենցի ստեղծագործություններն աչքի էին ընկնում ժանրային բազմազանությամբ՝ բանաստեղծություն, պոեմ, ազիտկա, ռադիոպոեմ, ռուբայաթներ, ռաբսոդիա, հրապարակախոսություն, պլակատ և այլն: Պետք է արձանագրել, որ դժվար է ժանրային կայուն բնորոշում տալ այդ ստեղծագործություններից շատերին, որովհետև բանաստեղծը համադրում է տարբեր ժանրերի յուրահատկությունները՝ ոճը, լեզուն, կառուցվածքը և այլն: Միշտ չէին, իհարկե, որ բանաստեղծի համառ որոնումները պսակվում էին հաջողությամբ: Նա երբեմն անցնում է

⁹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ 3, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 227:

պատշաճության սահմանները, կտրուկ ձևակերպումներով իր դեմ ուղղում քննադատության սլաքները, որոնք հաճախ ուղղորդված էին կամ միտումնավոր: Բայց, ի պատիվ բանաստեղծի, պետք է արձանագրել, որ նա համառորեն շարունակում էր գրական-գեղարվեստական պրպտումներն առաջընթացի նոր հուն մղելու իր ձգտումները՝ հայ գրականությունը հարստացնելով նոր յուրահատկություններով և իր որոնումները եզրափակելով «Գիրք ճանապարհի» կոթողային ժողովածուով:

Օգտագործված գրականություն

1. **Չարենց Ե.**, Գրականության մասին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957:
2. **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հատոր 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
3. **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հատոր 2, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
4. **Աղաբաբյան Ս.**, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973:
5. **Աղաբաբյան Ս.**, Հայ սովետական գրականության պատմություն, գիրք 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
6. **Գասպարյան Դ.**, Եղիշե Չարենց. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2022:
7. **Զաքարյան Ալ.**, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Երևան, ՀՀ, ԳԱԱ հրատ., 1997:
8. **Էդոյան Հ.**, Չարենցի պոետիկան, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011:
9. **Բարթ Ռ.**, Գրականություն և ճշմարտություն, էսսեներ, Երևան, Ապոլոն, 1999:
10. **Քնյուր Շ.**, Մոդայիկ գրականության մասին, «Նոր դար», հրատ., 2022:

Анusch Тасалян

Разнообразие, структурные и языковые особенности жанровой поэзии 1920 - х годов Египше Чаренца.

Заключение

Ключевые слова и выражения: жанр, язык, стиль, структура, стихотворение, поэма, цветовая система.

1. В начале 20 века в области мировой и русской литературы, искусства и культуры началась новая эпоха, которую не могла обойти стороной и армянская литература. Третья Декларация, которая, будучи первой попыткой в этом направлении, естественно, не была свободна от спорных

формулировок. В ней были выдвинуты теоретические принципы по направлению послеоктябрьского литературного творчества в новое русло, изменение стихотворного плана, обогащение содержания, поиск новых приемов и способов характеристики и создания образов.

2. В стремлении направить литературно-художественное развитие в новое русло неоспорима роль Е. Чаренца, стихи и поэмы которого были новыми и по содержанию, и по характеру, и по образности введения в поэзию новых слов, обогащения жанровой системы новыми оттенками и ряд других аспектов. Е. Чаренц экспериментировал новые модели построения стихотворения, где средства изображения становились более предметными, словарное значение слов обогащалось новым содержанием, а практические приложения — новыми синтаксическими классификациями.

3. Произведения Е. Чаренца 1920-х гг. отличались жанровым разнообразием: стихотворение, поэма, агитка, радиопоэма, рубайаты, рапсодии, реклама, плакат и др. Следует отметить, что трудно дать устойчивое жанровое определение этим произведениям, поскольку поэт сочетает в них особенности разных жанров: стиль, язык, структуру и т. д. Конечно, настойчивые поиски поэта не всегда венчались успехом. Он иногда переходил грани приличия, направлял на себя критику с резкими формулировками, которая часто была направленной или преднамеренной. Но, в честь поэта следует отметить, что он настойчиво продолжал свои усилия продвижения литературно-художественной деятельности по новому пути развития, обогащая армянскую литературу новыми особенностями и завершил свои поиски монументальным сборником «Книга пути».

Anush Tasalyan

**Diversity, structural and linguistic features of the genre poetry
of the 1920s by Yeghishe Charents.**

Conclusion

Key words and expressions: Genre, language, style, structure, poetry, poem, color system.

1. At the beginning of the 20th century, a new era began in the fields of world and Russian literature, art and culture, which Armenian literature could not remain indifferent. The theoretical foundations of taking the progress of the post-October art in a new direction, to changing the plan of the poem, enriching the content, of looking for new methods and ways of creating images were presented in declaration in three, which being the first attempt in that direction was naturally not free from controversial formulations.

2. In the quest to take the literary and artistic developments in a new direction the role of Y. Charents can't be renounced, whose poems were new both in terms of content and imagery, introducing newly created words into poetry, enriching the genre system with new nuances and a number of other aspects. Charents was experimenting with new models of poem structure, where the means of representation became more objective, the dictionary meanings of words were enriched with new content, and practical applications with new syntactic classifications.

3. Charents' works of the 1920s were notable for their genre variety: poem, poetry, agitka, radio poem, rubayats, rhapsody, publicity, poster, etc. It should be noted that it is difficult to give a stable definition of genre to many of these works, because the poet combines the peculiarities of different genres: style, language, structure, etc. Of course, the poet's persistent search was not always successful. He sometimes crosses the boundaries of propriety, directs the arrows of criticism against him with sharp wordings, which were often directed or intentional. But in honour of the poet it should be noted that he persistently continued his efforts to push literary and artistic productions to a new path of progress enriching Armenian literature with new peculiarities and concluding his search with the monumental collection of "Book of the way.

Խմբագրություն է ուղարկվել 24.02.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.03.2023թ.

Տպագրության է հանձնարարվել 13.03.2023թ.